35. ԽՈՂՐԱԹ

Կէղնի, չէղնի մարդ մը։ Մարդ կորրեվերնա, կառնե ուրին կնիկ մը։ Ըդ մարդուն կէղնի հասաչափ ախչիկ մը, անուն Խոդրաթ կէղնի։ Էդ ախչկան տարող չէղնի։ Էդ ախչիկ գեշ կէղնի, մարդ չտանա, ծծեր մեծցեր ին, լորցուկ մեծ ախչիկմ'։ Մամ լէ կաներ ա սոխրխներ, ըսդին, ընդին կպտտե, կուզե օր մարդ մը գտնա ու կարգա։ Կիշկա ըդ սոխրխներ օր ըդ ախչկա դորա մարդ չկա, ըստհախ մարդ կասա ախչկան հ'ըմեն օր, հ'ըմեն օր.

— Ա՛ռ զքու քարման ու գնա՛ ըդ ծառի տակ։

Ախչիկ կէրթա կնստի ծառի տակ։ Մամ լէ կէլնի, կիշքե, օր բազրգնի մը ջորեսներու ձեն կիգա, ինք ուրին կասա.—Իդա բազրգան է, օր կիգա ախչկան շուտ մը կխոսա. «Ախչի՛կ, դու կանի ըդ ծառի տակ բալքի ըդ բազրգնի քոչերու մեջ մեր ուզած մարդն էղնի»։

Ախչիկ լէ կկանի էդ տեխ ու քարման կմանա։ Կնիկ հաղմ' լէ կէլի տանիք ու կիշքե, կիշքե ի՞նչ կիշքե, տեսավ օր մեկ ծանր մեծ բազրգան մի էկավ ու թալեց ծառի հ'առեջ։ Ու կնիկ բոռաց ու բանձր ձենով մե կանչեց ախչկան, կանչեց ու ըսեց.—Խըդրա գզող, խըդրա մանող, հովերուն քնող, էլի արի, կեսօր կի։

Կնիկ իրեք բերան բանձր ձենով կանչեց, բազրգան հասկցավ։

17—276

խոսաց բազրգան, ըսեց.—Կնի՛կ, արի հ՚ոդա խոսացինք։

Մամ ուրախալեն ու խնդալեն էկավ ու բազրգնի հ՚առեջ կանավ ու խոսաց, ըսեց.—Ի՞նչ է հարցած օր դու իսնե կհարցուս։

— Կհարցում քըզի, ըդ ի՞նչն է, օր խիդր մե գզե, մեկ լէ մանե, ու էկե ըդ հով պառկե։

Ըսեց.—Իմ ախչիկն ա։

Ըսեց.—Ի՞նչ խադար դու կուզիս օսկի, օր դու քու ախչիկ տաս ընծիկ։

Ըսեց.—Դու գինաս, ինչ խադար օր դու տվիր, քու կամքով։

Բազրգան ըսեց.—Դու խոսացի, ինչ խադար օր կուզիս, ես կիտամ։

Ասեց.—Շատ չըմ ուզի, տըսնուհինգ օսկի փարա, ձեռք մը ապրշմե շոր՝ իմ տգին։

Մարդ լէ հանեց ու տվեց։ Կնիկ առավ խնդալեն, ուրխըցավ ու գնաց ուր իրկան խոսաց, ըսեց.—Մեր ախչիկ կարգեցի օր մարդ չէր առներ։

Մարդն ըսեց.—Էն աղեկ օր գնաց մեր ախչիկ, ուր իդարեն կէնա։

Բազրգան էլավ լուսուն շուտ բառձավ ու գնաց։ Գնաց քաղքեն դուրս հ՚էլավ։ Բազրգան էկավ ուր գեղի հ՚առեջ։ Մարդեր քոմ էկին, ասեցին.—Մեր բազրգան էկի, կին մը բերի ուրին,—խնդալեն գացին հ՚առեջ։

Բերեց ու իջուց ուր հ՚օդեն ու կանգըցուց։ Կանգըցուց հ՚ոգի՞ ու ըսեց.—Կնի՛կ, ես քինե կուզիմ օր դու ըդ բամբակ դզիս, մանիս, ու գործիս ես հար հ՚իգամ, ես կէրթամ իմ գործին։

Ախչիկն ըսեց.—Վըր աշից, վըր իմ գլխուն, պըտի մանիմ, թըմմիմ, հարի դու իգաս։

Ախչիկ էլավ բերեց ճախրակ ու դրեց ուր հ՚առեջ։ Քիչմ՚ լէ բամբակ բերեց ու դրեց ուր հ՚առեջ։ Ախչիկ էլավ բերեց օր թը ուրեն կերակուլ էփա ուտե։ Քիչ մը ջուր բերեց դրեց վըր օջխին, բերեց քիչ մը ալուր խուսեց մեջ, ըրեց ջրի ճաշ ու խուսից վերուց էրկու գդալ օր թը զհամ առներ, տաք էր։ Իտախս վերուց լցեց ուր էրկու բըջերուն, էրկու գդալ վըր ուր մեկ բըջին, էրկուս լէ վըր մեկէլին, օր թը պաղի, օր ուտա։ Բերեց ճախրակ ու դրեց հ՚առեջ, մեկ օլորցուց ու չորի լեզուն լեն-լեն բացեց, թալեց ու լիզեց զճաշ, մեկ լէ թալեց աջ բիջին լէ լիզեց։ Լիզեց ու ճախրակ փաթ մի օլ-

գրեց, իշեց օր չգիներ մաներ, կկտրեր ու կկցվեր, կհանգուցվեր, չէր կերնա օր թը մանի։

Ըստախ մեկ լէ զբերան լեն բացեց ու զլեզուն թալեց ու զճաշ լիզեց, լեզվի ծեր էրավ, սրբեց զէն ճաշ լեզվեն, թալեց, տեսավ օր սատանա մէ կանավ ըտ տեխ ու փոթքաց, ծիծզաց։ Յոթ տարի ըդ սատանի բուգի տակ ելք էր էլե։ Շատ շոշ էր, ինչ կէներ, չարա չէր ըլնե, չէր պատռի։ Օր ծիծզաց ու խայիմ մը փրոնքթաց վըր ըդ կնկան, ելք պատռավ, իտախս։

Սատանեն կնկան ասեց.—Իդա յոթ տարի էր օր ըս ելք վըր իմ բոգին էր, օր վըր քըզի իշքեցի ու ծիծզացի, պատռավ. ուզե, քու ուզած ես քըզի իտամ։

Ըսեց.—Քինե բան չըմ ուզի, կուզիմ օր տանիս ըդ բամբակ ու էնիս թոփ կտավ ու բերիս։

Սատանեն էլավ առավ զբամբըկներ ու գնաց։ Գնաց դուքան մը ու խոսաց, տարավ փոխեց ու բերեց։ Ըստախ բերեց տվեց կընկան։

Կնիկն ըսեց.—Շուքր իմ քըզնե, դիր հ'ոդի ու գնա։

Կնիկ դաստից զկտավներ ու դրեց հ'օդեն։ Հ'էլավ տանիքն ու իշքեց ու ինք զուր ջորեսներու բոգի տկի զանգուլակներու ձեն լսավ ու ճանչցավ։ Իդա հազ ուրխըցավ ու խընդացավ, թոփեր գործուկ լըմընցուկ էր։ Էկավ տեխ թալեց օր թը մարդն իգա ու պառկի։

Ըստախ մարդն էկավ, դանգեր դարդկեց, մտավ ներս ու տեսավ։ Տեսավ ի՞նչ տեսավ։ Տեսավ օր ուր բամբըկներ հ'մեն թոփուկ դրուկ է հ'ոդի։ Ըստախ կնիկ բերեց կերակուլ պատրաստեց ու դրեց մարդու հ'առեջ։

Ըստախ մարդն բաշլաից շատ կերակուլ օր ուտե։ Մարդ օր հաց կուտեր, իշեց օր սև բոլոջ էկավ ցածր։ Կնիկ հասավ շուտ մը զուր խսիր ու կուլաբ պարզեց։

Մարդ իշեց օր բոլոջ դուրս դեն գնաց ու իշեց օր ուր կնիկ վրեն վազգեց։ Կնիկ վերուց բոլոջ ձեռքով ու ըսեց.—Մեռնի՛մ քի, մորքո՛ւր, արի նստի վըր կուլբին ու խսրին, հ'ո՞րի հըմալ շուտ կէրթաս դուրս։

Մարդ լէ ըսեց.—Աստծու սիրուն, կնիկ, ըդ ի՞նչ բոլոջ ա, հ'ո՞րի կասիս՝ իմ մորքուրն ա։

Ըսեց թե.—Աստված վկա էդնի. իմ մորքուրն ա։

Ասեց.—Էդ իմա՞լ կէղնին, ես տեսա օր առքեն պատավ էդ մուռդալ բոլոջ։

Կնիկ լէ ասեց.—Ընծի խետ քու բամբկներ մանեցինք, օլրեցինք, դրծեցինք, մկա ուկավ ու էլավ էդմլա ու կէրթա։

Մարդ լէ խոսաց, ասեց.—Աստված վկա էղնիս, դու դո՞ր իս դու չմանիս։

Կնիկ հազմ՝ լէ ասեց.—Իդա իմ մորքուրն էր. օր շատ մանեց, էղավ բոլոջ։

Իրիկ լէ ասեց.—Դու դո՞ր իս, չմանիս, օր բոլոջ չէղնիս։

Կնիկ լէ խընդացավ, ուրբխցավ, ասեց.—Շուքր իմ աստրծուց, ես իդա դործից փրցա ու ազատա։

Ինոնք հասան ինոնց մուրազին, դու լէ հասնիս քու մուրազին։

Հ՚էրկնուց իրեք խնձոր պատավ. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկանջ էրողին։